



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՈՒՄԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



Ս. ԶԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

**«Ո՛Վ ԵՐԿՆԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐ, ԴՈՒՆ ՈՐ ԶՈՒ ՍՈՒՐԲԵՐՈՒՂ ԹԻՒՐ
ԲԱՐԵԳԹՈՒԹԵԱՄԲ ԱՄԲՈՂՋԱՅՈՒՅԻՐ, ՕՐՀՆԵ՛ ՄԵՐ
ՄԻԱՍՆՈՒԹԻՒՆԸ, ՈՐՊԵՍՉԻ ՈՉ ՈՔ ԲԱՆՍԱՐԿՈՒԵՆ
ՀՐԱՊՈՒՐՈՒԵԼՈՎ ԴՈՒՐՍ՝ ԿՈՐՍՏԱԿԱՆ ԲԱՂՆԻՔԸ ԵԼԼԵ:
ԱՆՈՆՑ ԾԳՆՈՒԹԵԱՄԲԸ՝ ՀԱՇՏՈՒԹԻ՛Ն ԿԸ ԽՆԴՐԵՆՔ ՄԵՐ
ԱՆՁԵՐՈՒՆ»**

(Շարական)

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Կիրակի, 14 Մարտ, 2010-ին, Սրբոց Քառասնից Մանկանց տոնին եւ եկեղեցւոյս անուանակոչութեան առիթով թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեան, Սուրբ եւ անմահ Պատարագ մատոյց եւ իր հոգեշունչ պատգամը փոխանցեց հաւատացեալ բազմութեան:

Պատարագիչ Սրբազան Հօր առընթերակայ էին Զրիստոնեական դաստիարակութեան վարիչներէն՝ Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիւմեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Հրանդ Քիւնյ. Երեցեան: Ս. Խորանին սպասարկեցին եկեղեցւոյս սարկաւազները, իսկ երգեցողութիւնը ներդաշնակութեամբ կատարուեցաւ եկեղեցւոյս Դպրաց դասի անդամ-անդամուհիներուն կողմէ, ղեկավարութեամբ՝ Պրն. Արամ Աղապապեանի:

Նախքան իր քարոզը, Սրբազան Հայրը գոհութիւն եւ փառք յայտնեց Աստուծոյ, որ անգամ մը եւս արժանացուցած է զինք գտնուելու Օրէնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ համայնքին հետ, հրաւիրելով բոլորը՝ աղօթելու միասնութեան, աշխարհի խաղաղութեան եւ մարդկային կեանքի ապահովման ու երջանկութեան համար: Իր խօսքին մէջ Սրբազանը յիշեց Քառասուն Մանկանց եկեղեցւոյ հիմնադիր՝ հոգեւորական թէ աշխարհական բոլոր այն սպասաւորներն ու նուիրեալները, որոնք Աստուծոյ ու Ազգին հանդէպ ունեցած իրենց հաւատքի եւ նուիրումին որպէս գրաւական՝ տարիներ առաջ կառուցին այս եկեղեցին, որոնցմէ շատեր այսօր երկնային իրենց կայքէն կը դիտեն մեզ, ու իրենց հոգիները կը հրճուին ի տես այս գաղութի ծաղկումին:

Սրբազանը քարոզի բնաբան ընտրած էր Ս. Քառասնից Մանկանց նուիրուած շարականի հետեւեալ բառերը.- «Ո՛Վ երկնաւոր Թագաւոր, դուն

որ քու սուրբերուդ թիւը բարեգթութեամբ ամբողջացուցիր, օրհնե՛ մեր միասնութիւնը, որպէսզի ոչ ոք բանսարկուէն հրապուրուելով դուրս՝ կորստական բաղնիքը ելլէ: Անոնց ճգնութեամբը՝ հաշտութի՛ն կը խնդրենք մեր անձերուն»:

Սրբազանը նախ անդրադարձաւ նուիրական այն մեծ կեանքին, որով ապրեցան 4-րդ դարուն իրենց հաւատքին մէջ անպարտելի եւ Աստուծոյ հանդէպ հաւատարիմ քառասուն սուրբ Մանուկները, որոնք Սեբաստիոյ Լիւսիաս հազարապետին հրամանով եւ օրուան դատաւոր՝ Ակրիկոդայոսի որոշումով նահատակուեցան Սեբաստիոյ լիճին մէջ, 9 Մարտ 316-թուականին:

Իր խօսքը շարունակելով Սրբազան Յայրը կարեւորութեամբ շեշտեց, որ Սեբաստիոյ լիճը Քառասուն Մանկանց համար եղաւ հոգեւոր այն Սկրտարանը՝ որուն մէջ անոնք իրենց տառապանքին մէջ կրցան տեսնել այն մեծ լոյսը, որ արեւի ճառագայթներուն նման կը ջերմացնէր զիրենք ու կը հալեցնէր լիճին սառոյցը, զայն հեղուկ ջուրի վերածելով: Անոնք իրենց աչքերը երկինք բարձրացնելով՝ տեսան անմարտելի Լոյսը՝ Քրիստոս, որ կը խրախուսէր զիրենք իրենց հաւատքին մէջ անխախտ մնալու, եւ իրենց հաւատքի միասնութիւնը պահելու: Անոնք որոնք պահպանեցին իրենց հաւատքը եւ հաւատքի միութիւնը Քրիստոսի հետ՝ արժանացան անմահութեան եւ փառաց պսակին, իսկ այն մէկ հոգին որ տկարացաւ ու դուրս եկաւ սառած լիճէն ու պատրաստուած տաք բաղնիքը վազեց՝ կորսուեցաւ, անոր փոխարէն լիճին մէջ նետուելով ու քառասուն թիւը ամբողջացնելով այնտեղ գտնուող պահակներէն մին: Մենք եւս, շեշտեց Սրբազան Յայրը, կոչուած ենք հաւատքի մեր կեանքը ապրելու եւ աղօթքի ճամբով Աստուծոյ հետ միշտ հաւատարմութեամբ քալելու, պահելով մեր հաւատքի միութիւնը եւ կապուածութիւնը անոր հետ, նման քառասուն Մանուկներուն, որպէսզի չարը, Սատանան, իր հրապուրիչ խօսքերով մեզ չկարենայ բաժնել Աստուծոյ հետ մեր կապուածութենէն ու չկարենայ ջլատել մեր միասնականութիւնը: Ահա թէ ինչո՛ւ պետք ունինք Քառասնից Մանկանց սուրբերու բարեխօսութեան, անոնց ներշնչումով մեր ուխտը վերանորոգելու եւ սրբակենցաղ ապրելակերպով մը՝ մեր կեանքը շարունակելու:

Յաւարտ Ս. Պատարագին, կատարուեցաւ յատուկ հոգեհանգիստ ի հոգիսն Եկեղեցւոյ նախկին հոգեւոր հովիւին եւ բարերարներուն ու սպասարկուներուն: Ապա, արարողութենէն ետք, Սրբազան Յայրը, շրջապատուած առնթերակայ հոգեւորականներով ու սարկաւազաց եւ դպրաց դասերով, առաջնորդուեցաւ Եկեղեցւոյս «Ղուկասեան» Սրահ, ուր, կազմակերպութեամբ Եկեղեցւոյ Տիկնանց միութեան եւ մասնակցութեամբ հոծ բազմութեան, կատարեց մատաղի օրհնութիւն, որ Եկեղեցւոյս անուանակոչութեան առթիւ պատրաստուած էր:

Աւարտին՝ «Ուրախ լեր» շարականի երգեցողութեամբ պատարագիչ Սրբազանը առաջնորդուեցաւ հանդերձարան, ուր անգամ մը եւս օրհնեց Դպրաց եւ Սարկաւազաց խումբի անդամները, որոնք բացառիկ ներդաշնակութեամբ, իրենց խմբավարին ղեկավարութեամբ՝ կատարեցին օրուան Ս. Պատարագի երգեցողութիւնը:

ՍԻՐՈՅ ՍԵՂՍ

Ուխտաւոր հաւատացեալներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ: Ճաշի ընթացքին, խօսք առաւ եկեղեցւոյ Յովիւ՝ Արժ. Տ. Յրանդ Զինյ. Երեցեան, որ այս առթիւ յանուն Ս. Զառասնից Մանկանց Եկեղեցւոյ մեծ ընտանիքին, բարի գալուստ մաղթեց բոլորին, շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Յօր, որ իր օրհնաբեր այցելութեամբ եւ օրուան Ս. Պատարագի մատուցումով իր սիրոյն արժանացուց եւ խարախուսեց բոլորը, Յոգեշնորհ Յայր Պարթեւին, որ այս առթիւ ընկերակցելով Սրբազան Յօր մասնակցեցաւ եւ սպասարկեց Ս. Պատարագին, Ազգ. Վարչութեան Ատենապետ՝ Տոքթ. Կարօ Յակոբեանին, Եկեղեցւոյ եւ անոր «Ղուկասեան» սրահի Բարերարներ՝ Զեօյլեան եւ Ղուկասեան ընտանիքի անդամներուն, օրուայ Մատաղի Գլխաւոր հովանաւոր՝ Թաթարեան ընտանիքին, ու բոլոր անոնց՝ որոնք իրենց ներկայութեամբ պատուեցին մեզ:

Տիկ. Անահիտ Աղապապեան, ապրումով կատարեց «Յայ Ժողովուրդին» քերթուածը, խօսք՝ Վենիք Յամբարձումեանի, արժանանալով բոլորի գնահատանքին:

Հուսկ բանքը արտասանեց Սրբազան Յայրը, որ իր գնահատանքը յայտնեց եկեղեցւոյ մեծ ընտանիքին, եւ յատուկ կերպով գնահատեց եկեղեցւոյ Տիկնանց միութեան վարչութիւնը եւ անդամները, ու բոլոր անոնք, որոնք մաս կազմած էին մատաղի պատրաստութեան, ու անոնց՝ որոնք հեռակայ շրջաններէն եկած էին ու մասնակից դարձած Զառասուն Մանկանց տօնին, հրաւիրելով բոլորը, որ համախմբուին Եկեղեցւոյ եւ Ազգին շուրջ, պահպանեն իրենց միասնականութիւնը եւ միութիւնը, զարկ տան մեր մէջ հոգեւոր եւ Ազգային ապրումներուն առաւել կենսաւորումին, ու միշտ իրարու շուրջ համախմբուելով՝ յառաջ տանին բոլոր աշխատանքները, ի նպաստ Օրէնճ Զառնութի գաղութի առաւել ծաղկումին:

«Պահպանիչ» աղօթքով վերջ գտաւ արարողութիւնն ու սիրոյ ճաշը:

PRELATE CELEBRATES DIVINE LITURGY ON THE NAME DAY OF FORTY MARTYRS CHURCH OF ORANGE COUNTY

On Sunday, March 14th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian celebrated Divine Liturgy at Forty Martyrs Church in Orange County on the occasion of the Feast of the Forty Martyrs which is also the name day of the church.

Assisting at the altar were Very Rev. Fr. Barthev Gulumian and parish pastor Rev. Fr. Hrant Yeretian.

Prior to his sermon, the Prelate gave thanks to God for granting the opportunity to be with the Forty Martyrs parish community, and called on the faithful to join him in prayer for peace and harmony to all the peoples of the world. The Prelate remembered the founders of Forty Martyrs Church and all the faithful servants who driven by their faith, devoted their time and efforts to the establishment and advancement of the church.

The Prelate's sermon focused on the lives and virtues of the forty martyrs who were martyred in the year 316 for their unyielding faith and devotion to God. The Prelate pointed out how Sepastia lake became like a

baptismal font for the martyred youth, from where looking up to the heavens they saw the Light which is Jesus Christ and received inspiration to remain steadfast in their faith. Those who defended their faith and their faith in our Savior Jesus Christ became worthy of eternal life while the one who faltered in his faith and fled the freezing waters succumbed. Like the forty martyrs, we too must live a life of faith and prayer and stand firm in our devotion and loyalty to God so as not to allow anyone or any thing to weaken our faith, said the Prelate, and concluded by urging the faithful to become renewed by the inspiring lives of the forty martyrs.

Following the service requiem was offered for the souls of the late parish pastor and servants of the church, after which the Prelate was led in a procession to "Gugasian" Hall to conduct the blessing of *madagh*.

A luncheon followed at the hall. Rev. Fr. Hrant Yeretjian welcomed the faithful and expressed his thanks to the Prelate for joining the community on this occasion and to Fr. Barthev for participating in the services. He continued, thanking Executive Council Chair Dr. Garo Agopian, church and hall sponsors Keuylian and Gugasian families, and sponsors of the day's *madagh*, the Tatarian family. A short cultural program also took place.

In his message, the Prelate commended the Ladies Guild and all those who worked hard to prepare for the day. He invited the community to gather around the church and unite their efforts, working in unison and harmony for the splendor of Forty Martyrs Church and the parish community of Orange County.

The day came to a close with the benediction by the Prelate.